

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1999 թվականի ապրիլի 14-ի ՅՕ-297, այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Պետությունը սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում հաշվառված եւ վերջին տասը տարում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին եւ բարձրագույն մասնագիտական կրթություն: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է առանձնացված՝ միայն սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերից գործուղված քաղաքացիների միջեւ, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների, ուսումնական հաստատությունների, սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերի:»:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Յեղիսակ՝ [Ռուզաննա Առաքելյան](#)